

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Արտակ Զաքարյանի և Կարինե Աճեմյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-304-23.07.2013-ՍՀ-010/0) վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման աշխատանքների շրջանակներում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նոր նախագիծ, ինչը Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն

արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության շրջանակներում իրացված են նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով ներկայացված առաջարկությունները:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծի հեղինակներին առաջարկում է ձեռնպահ մնալ նախագծի քննարկումից և դրան անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջիկայում Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք նոր խմբագրությամբ օրենքի նախագծի քննարկումների համատեքստում:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային Ժողովի մի խումբ պատգամավորների կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Կարինե Աճեմյանի և Արտակ Զաքարյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք ազդեցություն**:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի վերաբերյալ**

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
 2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
 3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:
- Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում օգտագործվող որոշ հասկացությունների հստակեցմանը և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է օրենքում օգտագործվող մի քանի հիմնական հասկացություններ շարադրել նոր խմբագրությամբ:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի վերաբերյալ բյուջետային բնագավառում կարգավորման
(ծախսերի մասով) ազդեցության գնահատման**

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ելքերի և մուտքերի, ինչպես նաև
բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխության չի հանգեցնում:

Պ-304-23.07.2013-ՍՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-207-Ն օրենքի 2-րդ հոդվածում.

1) «անօթեան» հասկացությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«անօթեան՝ ժամանակավոր օթեանի կարիք ունեցող, սեփականության իրավունքով բնակելի տարածություն եւ վարձակալելու հնարավորություն չունեցող անձ (ընտանիք).»

2) լրացնել «ընտանիք» հասկացությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«ընտանիք՝ միեւնոյն բնակության վայրում փաստացի բնակվող անձանց սոցիալական փոքր խումբ, որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն եւ ունեն ընդհանուր բյուջե, ինչպես նաեւ միայնակ բնակվող քաղաքացի.»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների հստակեցմամբ:

Այսպես, Նախագծով առաջարկվել է «Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները» վերտառությամբ.

1. 2-րդ հոդվածի անօթեան՝ այսինքն մշտական կամ ժամանակավոր կամ փաստացի բնակության վայր չունեցող անձ հասկացությունը շարարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ «անօթեան՝ ժամանակավոր օթեանի կարիք ունեցող, սեփականության իրավունքով բնակելի տարածություն եւ վարձակալելու հնարավորություն չունեցող անձ (ընտանիք).» քանի որ ըստ գործող օրենքի սահմանման մշտական կամ ժամանակավոր կամ փաստացի բնակության վայր չունեցող անձը մի տեսակ հավասարեցվում է որոշակի բնակության վայր չունեցող անձի՝ այսինքն անտուն, տնազուրկ, տնավեր անձի, մի խոսքով անապաստան անձի (ԵՕՄՋ) հետ: Այդ կերպ «անօթեան» հասկացությունը կհամապատասխանեցվի Օրենքի 12-րդ հոդվածին:

2. 2-րդ հոդվածը լրացնել «ընտանիք» հասկացությամբ հետեւյալ բովանդակությամբ «ընտանիք՝ միեւնույն բնակության վայրում փաստացի բնակվող անձանց սոցիալական փոքր խումբ, որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն եւ ունեն ընդհանուր բյուջե, ինչպես նաեւ միայնակ բնակվող քաղաքացի» քանի որ գործող օրենքում տարբեր առումներով բազմիցս օգտագործվում է ընտանիք բառը, եւ չնայած ընտանիքը հասարակության բնական եւ հիմնական բջիջն է եւ սոցիալական ոլորտներում պետության հիմնական խնդիրն է պաշտպանել եւ հովանավորել ընտանիքը, քանի որ յուրաքանչյուր ոք ունի իր եւ իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, ինչպես նաեւ կենսապայմանների բարելավման իրավունք, այնուամենայնիվ ընտանիքի հասկացությունը տվյալ օրենքում ամրագրված չէ: Ընդ որում, «ընտանիք» հասկացությունը սահմանված չէ նաեւ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում:

«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմամբ կհստակեցվեն օրենքում ամրագրված հասկացությունները եւ դրանք կհամապատասխանեցվեն օրենքում ամրագրված դրույթներին, որի արդյունքում կվերանան տարընթերցումներն ու դրանց տրվող տարբեր մեկնաբանությունները: